ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Սմբատի Քոսյանի «Արևմտահայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 90-ական թթ.» թեկնածուական ատենախոսության մասին

Հանրահայտ է, որ ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ դրա իրավաժառանգորդ Թուրքիայի Հանրապետությունում իրար հաջորդող վարչակարգերն, տարբեր հարցերում ունենալով լուրջ հակասություններ ու տարաձայնություններ, Հայկական հարցի հետ կապված ունեցել են միասնական հակահայկական դիրքորոշում և հետևողականորեն վարել են հայ ժողովրդի սեփական հայրենիքում ապրելու և ինքնակազմակերպվելու հնարավորությունն իսպառ բացառելու քաղաքականություն, ինչն արտահայտվել է զանգվածային կոտորածներով ու ցեղասպանությամբ, էթնիկ զտումներով ու հայրենազրկմամբ:

Հայ ժողովրդի նկատմամբ պարբերաբար իրականացված հանցագործությունները կոծկելու և դրանց համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով Թուրքիայի Հանրապետության իշխանությունները տասնամյակներ շարունակ պետական մակարդակով վարում են ժխտողական քաղաքականություն: Այդ քաղաքականության համար «գիտական» հիմքեր ստեղծելու համար հիմնադրվեց Թուրքական պատմագիտական ընկերությունը, որի կողմից տարբեր լեզուներով բազմաթիվ քարոզչական բնույթի նյութեր հրատարակվեցին ու տարածվեցին: Թուրք մասնագետների կողմից հրատարակված աշխատանքներում կեղծվում ու նենգափոխվում է ոչ միայն 20-րդ դարի սկզբին երիտթուրքական և քեմալական իշխանությունների կողմից իրականացված Հայոց ցեղասպանության պատմությունը, այլև այդ հանցավոր քաղաքականության սկզբնավորումը հանդիսացող 19-րդ դարի վերջին համիդյան վարչակարգի իրագործած զանգվածային կոտորածների իրողությունները:

Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության հակայական քաղաքականության գաղափարական-քարոզչական հիմքերն ապահովելու տեսակետից թուրքական ներքաղաքական դիսկուրսում և հատկապես կառավարող վերնախավում

Сканировано с CamScanner

հաստատված ավանդույթի համաձայն ազգայնամոլական գաղափարախոսությունները մշտապես ասոցացվել են ինչպես քաղաքական սիմվոլիզմի, այնպես էլ պատմական կերպարների հետ: Այս առումով հատկանշական է, որ վերջին շրջանում թուրքական պատմագիտության մեջ և քաղաքական շրջանակներում նկատվում են սուլթան Աբդուլ Համիդ II-ի և Ռ. Էրդողանի միջև զուգահեռներ անցկացնելու, նրանց վարած քաղաքականության միջև ընդհանրություններ գտնելու միտումները: Անկասկած, նման զուգահեռներ անցկացնելը պայմանավորված է նաև Էրդողանի կողմից որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարական հիմք հռչակված նեոօսմանականությամբ, ինչն ակնհայտ սպառնալիք է ոչ միայն Օսմանյան կայսրության նախկին տարածքներում, այլև դրանց հարակից տարածաշրջաններում գոյություն ունեցող պետությունների ու ազգերի համար: Վերընշվածից ելնելով, Լիլիթ Քոսյանի ատենախոսության թեման առավել քան արդիական է:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ինչպես նաև թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «1890-ական թթ արևմտահայերի զանգվածային կոտորածների հետևանքները և գաղթականության տեղաշարժերը», բաղկացած է երկու ենթագլուխներից: Առաջին ենթագլխում ներկայացվում են համիդյան վարչակարգի կողմից արևմտահայերի բնաջնջման մեխանիզմները՝ զանգվածային կոտորածներ, բռնի իսլամացում, Արևմտյան Հայաստանում ապրելու անտանելի պայմանների ստեղծում և այլն՝ անդրադարձ կատարելով նաև դրանց հետևանքներին:

Երկրորդ ենթագլխում քննարկվել են արևմտահայ գաղթականների տեղաշարժի հիմնական ուղղությունների և հայրենի բնակավայրեր նրանց վերադարձի հետ կապված հարցերը:

Երկրորդ գլուխը՝ «Ռուսական պետական, հասարակական և կրոնական

Сканировано с CamScanner

կազմակերպությունների աջակցությունը արևմտահայ գաղթականությանը» բաղկացած է երեք ենթագլուխներից: Տվյալ գլխում ներկայացված է արևմտահայ գաղթականներին ռուսական պետական և հասարակական կառույցների, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու և Կովկասի Հայոց բարեգործական ընկերության կողմից ցուցաբերված նյութական օգնությունը: Քննարկվում են նաև արևմտահայ գաղթականության տարաբնույթ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման օբյեկտիվ ու սուբյեկտիվ դժվարությունները:

Երրորդ գլխի՝ «Արևմտահայության օգնության կազմակերպումը եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների կողմից» երեք ենթագլուխներում ներկայացվում է եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների կողմից Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերում ծանր վիճակում հայտնված, ինչպես նաև արտասահմանյան երկրներում ապաստան գտած արևմտահայ գաղթականությանը ցուցաբերած նյութական օգնությունը:

Եզրակացություններում հեղինակն ամփոփում է աշխատանքի արդյունքները:

Պետք է նշել, որ ատենախոսն իր աշխատությունը պատրաստելիս օգտագործել է թեմային վերաբերող արխիվային նյութեր և տարբեր հետազոտողների ուսումնասիրություններ: Լ. Քոսյանի կողմից կատարվել է ինքնուրույն աշխատանք և նա ընդհանուր առմամբ հաղթահարել իր առջև դրված խնդիրները:

Այդուհանդերձ, աշխատանքը զերծ չէ բացթողումներից ու թերություններից, որոնց վրա հրավիրում ենք ատենախոսի ուշադրությունը.

1. Ատենախոսության մեջ որոշ խնդիրներ են նկատվում ինչպես կառուցվածքի, այնպես էլ գլուխների ու ենթագլուխների վերնագրերի ձևակերպումների հետ կապված:

Երկրորդ գլխի վերնագիրը՝ «Ռուսական պետական, հասարակական և կրոնական կազմակերպությունների աջակցությունը արևմտահայ գաղթականությանը» խմբագրման կարիք է զգում, քանզի տվյալ գլխում զետեղված Կովկասի Հայոց բարեգործական ընկերության և առավել ևս Հայ առաքելական եկեղեցուն նվիրված ենթագլուխները գլխի նման վերնագրի տակ չեն կարող ներկայացվել: Ավելի ճիշտ կլիներ գլուխը վերնագրել հետևյալ կերպ՝ «Ռուսական պետական, հասարակական կազմակերպությունների և հայ

Сканировано с CamScanner

ազգային կառույցների աջակցությունը արևմտահայ գաղթականությանը»:

Խախտված է նաև տվյալ գլխի ենթագլուխների հերթականությունը: Գլխի վերնագրից բխում է, որ առաջին ենթագլխում պետք է ներկայացվեր ոչ թե Կովկասի Հայոց բարեգործական ընկերության, այլ Կովկասի փոխարքայության և ռուսական կազմակերպությունների ցուցաբերած օժանդակությունը: Դրանից հետո երկրորդ ենթագլխով տրամաբանական կլիներ նախ ներկայացնել Հայ առաքելական եկեղեցու աջակցությունը և նոր միայն Կովկասի Հայոց բարեգործական ընկերության ցուցաբերած աջակցությամբ:

Տվյալ գլխի 2.1. «Կովկասի Հայոց բարեգործական ընկերության մարդասիրական աջակցությունը արևմտահայ գաղթականներին» և և 2.3. «Հայ առաքելական եկեղեցու մարդասիրական աջակցությունն արևմտահայ գաղթականներին» ենթագլուխներում «մարդասիրական» բառի գործածությունը բացարձակապես ավելորդ է, դա տեղին է գործածել օտար պետությունների և կազմակերպությունների պարագայում:

Կարծում ենք, երրորդ գլխի 5 էջից բաղկացած 3.1. ենթագլուխն արհեստականորեն է առանձնացված, ավելի նպատակահարմար էր այն միավորել 3.2. ենթագլխի հետ և ընդհանուր ներկայացնել եվրոպական երկրների կողմից արևմտահայությանը ցուցաբերված օգնությունը: Առհասարակ երրորդ գլուխն իր հարցադրումներով ու բովանդակությամբ առավելապես նվիրված է ոչ թե Անդրկովկաս և մասնավորապես Արևելյան Հայաստան գաղթած, այլ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաշատ տարածքներում (Պոլիս, Կիլիկիա) մնացած ու արտասահմանյան երկրներում ապաստան գտած արևմտահայ գաղթականությանը եվրոպական և ամերիկյան կազմակերպությունների ցուցաբերած օգնության ներկայացմանը: Ամբողջ գլխում միայն մեկ տեղում հիշատակում կա Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի որոշ բնակավայրերում հաստատված արևմտահայ գաղթականությանը Դանիայից ուղարկված նյութական աջակցության մասին (էջ 85-86):

2. Առաջին գլխի առաջին ենթագլուխը նվիրված է արևմտահայերի զանգվածային կոտորածների հետևանքներին, սակայն ատենախոսն առավելապես ներկայացնում է համիդյան հայաջինջ քաղաքականության իրագործման մեխանիզմները՝ զանգվածային

Сканировано с CamScanner

բնաջնջում, բռնի իսլամացում, հայ բնակչության համար իր հայրենիքում ապրելու անտանելի պայմանների ստեղծում և այլն: Թեև հեղինակը անդրադառնում է նաև համիդյան քաղաքականության իրագործմամբ հայ ժողովրդի կրած մարդկային կորուստների և Արևմտյան Հայաստանում ժողովրդագրական պատկերի փոփոխության հարցերին, սակայն չի փորձում խորամուխ լինել զանգվածային կոտորածներից և բռնի իսլամացումից հետո արևմտահայերի թվաքանակի հստակեցման հարցում:

Հպանցիկ հիշատակվում է համիդյան ջարդերի հետևանքով հայ բնակչության զոհերի շրջանառության մեջ եղած 300 000 թիվը, մինչդեռ այդ խնդիրների հետ կապված որոշ հետազոտողներ՝ Ռ. Գևորգյան, Գ. Բաղալյան, Ռ. Թաթոյան և ուրիշներ, ուշագրավ ուսումնասիրություններ են կատարել և, կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը ծանոթանար դրանց և տարբեր մոտեցումները համադրելով իր սեփական դիրքորոշումն արտահայտեր տվյալ հարցում:

Առանց սեփական տեսակետն արտահայտելու ատենախոսը բռնի իսլամացված հայերի թվաքանակի հետ կապված մեջբերում է Ժակ Մորգանի և Ա. Կիրակոսյանի կողմից նշվող 200 000 թիվը (էջ 19):

Նույն կերպ ատենախոսն իր դիրքորոշումը չի հայտնում Անդրկովկաս և մասնավորապես Արևելյան Հայաստան գաղթած արևմտահայ գաղթականների թվաքանակի վերաբերյալ և առանց թվական տվյալների ներկայացման նշում է, որ որոշակի պատճառներից ելնելով այդ հարցում հակասական թվեր են շրջանառվել (էջ 34):

3. Առաջին գլխի երկրորդ՝ «Արևմտահայ գաղթականության տեղաշարժեր» ենթագլխում ատենախոսը նշում է, որ արևմտահայ գաղթականությունը սկզբնական շրջանում ապաստանեցին Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի՝ Օսմանյան կայսրության հետ սահմանակից տարածքներում՝ սևծովյան առափնյա շրջաններում, Կարսի մարզում, Սուրմալուի գավառում, Երևանի նահանգում, Ախալքալակի գավառում և նրանց միայն փոքր հատվածն էր հասնում Այսրկովկասի երկրամասի կենտրոնական և արևելյան հատվածները՝ Թիֆլիս, Բաքու, Ղուբա և այլն: Աշխատանքն էականորեն կշահեր և ուսումնասիրության գիտական նորույթն ավելի

Сканировано с CamScanner

ակնառու կլիներ, եթե ատենախոսը կարողանար ներկայացնել ապաստանած սկզբնական բնակավայրերից գաղթականության հետագա տեղաշարժերը, ցույց տալ տվյալ բնակավայրերի ժողովրդագրական ընդհանուր պատկերի վրա նրանց թվաքանակի ազդեցությունը, քննարկել այդ բնակավայրերում նրանց ինտեգրման գործընթացները և այլն:

Ավելի նպատակահարմար կլիներ, որ տվյալ ենթագլխում արծարծված գաղթականների վերադարձի խնդրին վերաբերող հատվածն առանձնացվեր որպես ենթագլուխ և ավելի խորությամբ ուսումնասիրվեր:

4. Աշխատանքն էականորեն կշահեր, եթե ատենախոսը եղած աղբյուրների տվյալների հիման վրա փորձեր ըստ տարիների աղյուսակների տեսքով ներկայացնել և ինքնուրույն ընդհանրացնել ռուսական պետական ու հասարակական կառույցների, ինչպես նաև Հայ առաքելական եկեղեցու ու Կովկասի Հայոց բարեգործական ընկերության կողմից արևմտահայ գաղթականներին ցուցաբերած նյութական օգնության գոնե մոտավոր ծավալները: Նման մոտեցումը թույլ կտար հասկանալ գաղթականներին տրամադրվող նյութական օգնության ծավալների ավելացման կամ նվազման միտումները և դրանց վրա ազդող գործոնները:

5. Աշխատանքում նկատվում են փաստական որոշ սխալներ և վիճելի ձևակերպումներ:

Այսպես՝ էջ 13-ում ատենախոսը գրում է. «իսլամի ընդունումը գրեթե ինքնաբերաբար հանգեցնում էր թուրքացմանը»: Այս պնդումը վիճելի է, քանզի անգամ իսլամ ընդունելով բազմաթիվ հայեր շարունակում էին այս կամ այն կերպ պահպանել իրենց ինքնությունը, իսկ քրդերով բնակեցված շրջանների պարագայում իսլամացումը կարող էր հանգեցնել քրդացման:

Էջ 37-ում ատենախոսը նշում է, որ 1900 թ. ապրիլի 2-ին Օսմանյան կայսրության հետ կնքված համաձայնագրով Ռուսաստանին էր փոխանցվել Արևմտյան Հայաստանի և Սև ծովի հարավային ափի երկաթգծի գույքը, ինչի դիմաց վերջինս հրաժարվել էր հայ գաղթականներին իրենց հայրենիք վերադարձնելու պահանջից, մինչդեռ խոսքը ոչ թե գույքի, այլ երկաթգծի շահագործման իրավունքի՝ կոնցեսիայի տրամադրման մասին է:

Сканировано с CamScanner

էջ 23-ում ատենախոսն իրավացիորեն նշում է, որ 1890-ական թվականներին արևմտահայության զանգվածային կոտորածների և բռնի իսլամացման գործընթացը համակարգվում և ուղղորդվում էր պետության կողմից: Նման եզրակացության հանգելուց առաջ, սակայն, անհրաժեշտ էր ներկայացնել այն հաստատող փաստական տվյալներ, որոնք օսմանյան և թուրքական աղբյուրների հիման վրա հանգամանորեն ներկայացված են Ռ. Սաֆրաստյանի «Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.)» աշխատությունում:

Ատենախոսության 83-րդ էջում տեղ գտած «Հայ առաքելական եկեղեցու և Կ. Պոլսի պատրիարքության այս համատեղ գործունեությունը...» ձևակերպումից կարող է թյուր տպավորություն ստեղծվել, թե Կ. Պոլսի պատրիարքությունը ոչ թե Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկն է, այլ առանձին կրոնական կառույց, որի հետ վերջինս համագործակցել է: Ավելի տեղին կլիներ գրել. «Սուրբ Էջմիածնի և Պոլսի պատրիարքության այս համատեղ գործունեությունը...»:

Հայտնի է, որ Կայզերական Գերմանիան լուռ համաձայնությամբ, հանցավոր անգործությամբ, քաղաքական, դիվանագիտական ու ռազմական աջակցությամբ իր դաշնակից Օսմանյան կայսրության կողմից իրագործված հայերի ցեղասպանության հանցակիցը դարձավ: Սակայն ատենախոսը էջ 99-ում առանց հիմնավորման պնդում է, որ «19-րդ կեսից Գերմանիան աջակցել և օգնել է Օսմանյան կայսրության ռազմագործությունների մեջ»՝ չներկայացնելով նաև, թե ինչպես է այդ օգնությունը կամ աջակցությունը դրսևորվել:

6. Ատենախոսի կողմից օգտագործված օտար աղբյուրներն ու օտարալեզու գրականությունը սակավաթիվ է: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից ավելի շատ օգտագործվեին ռուսական արխիվային նյութեր և գրականություն:

7. Ատենախոսության մեջ տեղ են գտել նաև ոչ ճիշտ եզրույթների և աշխարհագրական անվանումների կիրառություններ:

19-րդ դարի վերջի դրությամբ հայկական գաղթավայրերի հետ կապված «սփյուռք» եզրույթի գործածումը (էջ 82) տեղին չէ, քանի որ որպես այդպիսին Հայկական սփյուռքը սկսեց ձևավորվել Հայոց ցեղասպանությունից հետո՝ 20-րդ դարի 20-ական

Сканировано с CamScanner

թվականներին:

էջ 56-ում խոսվում է Վասպուրականի նահանգի Արճեշ գավառի մասին, մինչդեռ պետք է նշվեր Վանի նահանգի:

Սեբաստիա քաղաքի և նահանգի փոխարեն գործածվում է Սվազ անվանումը (էջ 80, 90):

8. Աշխատանքը խմբագրման և սրբագրման կարիք է զգում, երբեմն հանդիպում են անհասկանալի մտքեր և անհաջող ձևակերպումներ: Օրինակ՝ «մշակութային ժառանգության համակարգված և հետևողական ջարդ» (էջ 20) պետք է լինի՝ ոչնչացում:

9. Աշխատանքում նկատվում են նաև տեխնիկական թերություններ: Այսպես՝ բովանդակություն բաժնում նշված 1.1. ենթագլխի վերնագիրը տարբերվում է համապատասխան էջում նշված նույն ենթագլխի ձևակերպումից:

Ամփոփելով կարող ենք նշել, որ արված դիտողություններով հանդերձ Լիլիթ Սմբատի Քոսյանի «Արևմտահայ գաղթականությունը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 90-ական թթ.» Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին ու մասնագիտությանը, հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները, իսկ ատենախոսությունը ընդհանուր առմամբ բավարարում է նման աշխատանքներին ներկայացնող պահանջներին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Յ. Մարուքյան

Պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Յ. Մարուքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտքարտուղար, պ.գ.թ., դոցենտ Հ. Ղ. Մուրադյան

9.02.2026 թ.

Сканировано с CamScanner